ԱՐՏԱՔԻՆ ԿԱՊԵՐԻ ԲԱԺՆԻ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ
2020-2021 ՈՒՍՏԱՐԻ

Ավանդական բժշկության համալսարանի Արտաքին կապերի բաժինը (այսուհետ նաև արտաքին կապերի բաժին) համալսարանի միջազգայնացմանը նպաստող ենթակառուցվածք է, որը գործում է Հայաստանի Հանրապետության օրենսդրության համապատասխան, ԱԲՀ-ի և Արտաքին կապերի բաժնի կանոնակարգի հիման վրա:

Արտաքին կապերի բաժնի աշխատանքներն իրականացնում են բաժնի վարիչը և բաժնի առաջատար մասնագետը՝ ռեկտորի և համալսարանի ստորաբաժանումների հետ համատեղ:

Արտաքին կապերի բաժնի հիմնական նպատակն է ապահովել համագործակցությունը ներպետական և օտարերկրյա ուսումնական հաստատությունների և գիտական կենտրոնների միջև, ընդլայնել միջազգային համագործակցությունը, նպաստել ուսանողների և պրոֆեսորադասախոսական կազմի փոխանակման ծրագրերին, համալսարանի և միջազգային այլ կառույցների միջև մշտական կապի ամրապնդմանն ու համագործակցության զարգացմանը, այլ երկրներից ուսանողների ներգրավման ու երկրների աշխարհագրության մեծացմանը:

1. ԱԲՀ ուսանողների ընդունելություն և հրամանգրում

1.1. Մայիս-հունիս ամիսներին բաժնի կողմից կատարվել է օտարերկրյա դիմորդների ընդունելության փաստաթղթերի և չափորոշիչների նախապատրաստում:

1.2. ՀՀ ԿԳՄՍՆ կողմից սահմանված ժամկետներում (13.07.2019-25.09.2019) կատարվել է դիմորդների անձնական դիմումների ու գործերի ուսումնասիրում և ներկայացում ՀՀ ԿԳՄՍՆ՝ փորձաքննության: Ըստ ՀՀ ԿԳՄՍՆ-ի կողմից ներկայացված 19. 10. 2020 N27/15.2/27641-2020 գրության և ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարի կողմից ընդունված 2020 թվականի հոկտեմբերի 10-ի N1447-Ա/2 հրամանի՝ հաշվի առնելով նոր տիպի կորոնավիրուսով (COVID-19) պայմանավորված համաճարակային իրավիճակը, վճարովի առկա ուսուցմամբ բակալավրի ու անընդհատ և ինտեգրացված կրթական ծրագրերով ընդունելության համար օտարերկրացիների և սփյուռքահայերի փաստաթղթերի ընդունման ժամկետը երկարաձգվեց և վերջնաժամկետ սահմանվեց 2020 թվականի հոկտեմբերի 30-ը, որի ընթացքում համալսարանի կողմից ևս մի քանի դմորդների փաստաթղթեր են ներկայացվել ԿԳՄՍՆ:

1.3. Ուսումնական մասի վարիչի և Դեկանի հետ համատեղ կատարվել է օտարերկրյա դիմորդների ընդունելության հանձնաժողովի կազմի ընտրություն և հրամանգրում:

1.4. Սեպտեմբեր-հոկտեմբեր ամիսներին կատարվել է ՀՀ ԿԳՄՍՆ համապատասխան հրահանգների հիման վրա ուսանողների հրամանագրում:

1.5. Հոկտեմբեր ամսվա վերջում կատարվել է համալսարանի օտարերկրյա ուսանողների ընդունելության արդյունքների հաստատում՝ Ուսումնական մասի վարիչի և Դեկանի հետ համատեղ:

1.6. Արտաքին կապերի բաժնի հիմնական գործառույթներից է նաև օտարերկրյա ուսանողների ժամանակավոր կացության քարտերի կազմակերպման գործընթացը, որի համար բաժինը համագործակցում է ՀՀ Անձնագրային և վիզաների վարչության Կենտրոնական անձնագրային բաժանմունքի հետ: Կացության քարտերի հետ կապված աշխատանքը կատարվել է 2020թ. սեպտեմբեր–նոյեմբեր և 2021թ. փետրվար-մարտ ամիսներին՝ ուսանողներին ԲՈՒՀ հրամանագրելուց և ՀՀ ԿԳՄՄՆ հաստատումը ստանալուց հետո: Բաժնի կողմից պատրաստվել են անհրաժեշտ փաստաթղթերի փաթեթներ ու փաստաթղթեր և ներկայացվել են ՀՀ ԿԳՄՄՆ, ինչպես նաև ՀՀ անձնագրային և վիզաների վարչություն: 2020-2021 ուսումնական տարում կատարվել է նաև արդեն ԱԲՀ ուսանող հանդիսացող ուսանողների ժամանակավոր կացության քարտերի վերաձևակերպում:

2. Օտարերկրյա ուսանողների ներգրավման գործընթացը

2.1. Արտաքին կապերի բաժինը համագործակցում է ուսանողների ներգրավմամբ զբաղվող օտարերկրյա կազմակերպությունների հետ (Campus International, Study Medicine Europe և այլն):

2.2. Ուսանողների հավաքագրումը կատարվել է նաև անմիջապես բաժնի կողմից՝ արտերկրներից ստացվող անհատական դիմումների հիման վրա: Ուսանողների ներգրավումը համալսարանի կրթական գործընթացին իրականացվել է համաձայն ՀՀ Կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության, ինչպես նաև ՀՀ Արտաքին գործերի նախարարության կողմից մշակված կարգերի համաձայն:

2.3. Արտաքին կապերի բաժինը արտահամալսարանական կառույցների հետ գտնվելով մշտական կապի մեջ (էլեկտրոնային, հեռախոսային և այլն)՝ նրանց պարբերաբար տեղեկացրել է ընդունելության կարգի մեջ կատարվող փոփոխությունների մասին, ինչպես նաև նրանց ցուցաբերել է անհրաժեշտ խորհրդատվություն, տեղեկատվություն և աջակցություն ամբողջ տարվա աշխատանքի ընթացքում:

2.4. Դիմորդների դիմումները/ հայտերը ներկայացվել են համալսարանի պաշտոնական կամ Արտաքին կապերի բաժնի էլեկտրոնային հասցեներին: Բաժնի կողմից նախնական փուլում ճշտվել է դիմորդի քաղաքացիությունը/անձնագրային տվյալները և միջնակարգ/բարձրագույն կրթության վկայականի/այլ վկայականների առկայությունը, ներկայացվել են համալսարանի կողմից առաջարկվող ծառայությունները, առավելություններն ու հնարավորությունները:

2.6. Ուսանողների հավաքագրման գործընթացն իրականացվել է ողջ տարվա ընթացքում:

2.7. Արտաքին կապերի բաժինը աշխատել է ՀՀ Արտաքին գործերի նախարարության հետ՝ օտարերկրյա քաղաքացիներին մուտքի արտոնագիր տրամադրելու համար, կատարել է հարցումներ և ստացել պարզաբանումներ:

3. Տարվա ընթացքում Արտաքին բաժնի վարիչը, ըստ անհրաժեշտության, պատրաստել և ներկայացրել է հաշվետու տեղեկանքներ ԱԲՀ ռեկտորին, ՀՀ ԿԳՄՄՆ ստորաբաժանումներ և այլն: Ինչպես նաև 2020-2021 ուստարում Արտաքին կաբերի բաժնի վարիչը պատրաստել և ներկայացրել է թվով **9** արձանագրություն, որը պահվում է բաժնի առօրյա գործերում:

4. Արտաքին կապերի բաժինը բոլոր ստորաբաժանումների հետ միասին մասնակցել է ուսանողների հետ տարվող աշխատանքներին՝ հանդես գալով որպես համակարգող օղակ ուսանողների և համալսարանի ստորաբաժանումների միջև: Տարվա ընթացքում դեկանի, Ուսումնական մասի վարիչի, դասախոսների հետ միասին իրականացվել են հանդիպումներ, ժողովներ ուսանողների հետ ՝ կարգապահական, ակադեմիական առաջադիմության և այլ հարցերի վերաբերյալ:

Բաժինը աջակցել է օտարերկրյա ուսանողներին ինչպես կրթական, այնպես էլ իրավական, առօրեական և այլ հարցերում՝ ստեղծելով հնարավորինս բարենպաստ պայմաններ ուսանողների համար: Ամբողջ տարվա ընթացքում ակտիվ կապ է պահպանվել ուսանողների և նրանց ծնողների հետ սոցիալական ցանցերի, էլէկտրոնային հաղորդագության և հեռախոսակապի միջոցով և նրանց հարցերին տրվել է օպերատիվ լուծում: Բաժինը նաև համագործակցել է համալսարանի ստորաբաժանումների հետ՝ ուսանողների հաճախելիության ու առաջադիմության հետ կապված հարցերի վերաբերյալ:

5. Ցավոք սրտի 2020-2021 ուսումնական տարում նկատվեց դիմորդների թվի որոշակի նվազում, որը պայմանավորված էր աշխարհում տարածված COVID-19 համավարակով: Ամփոփելով ընդունելության արդյունքները՝ կարող ենք փաստել, որ համեմատած 2019-2020 ուստարվա հետ՝ 2020-2021 ուստարում առաջին կուրս ընդունվող ուսանողների թիվը նվազել է ***24%***-ով: Ստորև դիագրամի տեսքով ներկայացնենք 2020-2021 ուստարվա ուսանողների ընդունելության արդյունքները համեմատած 2019-2020 ուստարվա հետ:



Ստորև դիագրամի տեսքով ներկայացնենք նաև 2019-2020 և 2020-2021 ուստարիների ուսանողների ընդունելության արդյունքները ըստ երկրների։





2020-2021 ուստարվա գարնանային կիսամյակում Հորդանանի քաղաքացի հանդիսացող 1 ուսանող տեղափոխվել է Ավանդական բժշկության համալսարանի բուժական ֆակուլտետի 5-րդ կուրս ուսումը շարունակելու։

Ներկայացնենք նաև օտարերկրյա և սփյուռքահայ ուսանողների ընդհանուր քանակը 2020-2021 ուստարվա սկզբին ըստ երկրների և սեռի:

Բուժական ֆակուլտետ

Կուրս	Ընդամենը	Սեռ	Երկիր
I	67	39 իգ. 28 ար.	Հնդկաստան-52 Իրան-4 Մեծ Բրիտանիա-3 Շվեդիա-1 Հորդանան-7
II	97	51 իգ. 46 ար.	Հնդկաստան-90 Մեծ Բրիտանիա-3 Ֆիլիպիններ-2 Իրաք-1 Իրան-1
III	68	32 իգ. 36 ար.	Հնդկաստան-44 Մեծ Բրիտանիա-12 Իրաք-6 Իռլանդիա-2 Իրան-1 Շվեդիա-1 Շրի Լանկա-1 Հորդանան-1
IV	44	22 իգ. 22 ար.	Հնդկաստան-35 Իրաք-7 Մեծ Բրիտանիա-1 Հորդանան-1
V	20	6 իգ. 14 ար.	Իրաք-13 Հնդկաստան-6 Հորդանան-1
VI	7	7 ար.	Իրաք-5 Հնդկաստան-2
Ընդամենը	303	150 իգ. 153 ար.	Հնդկաստան-229 Իրաք-32 Մեծ Բրիտանիա-19 Հորդանան-10 Իրան-6 Շվեդիա-2 Իռլանդիա-2 Ֆիլիպիններ-2 Շրի Լանկա-1

Ստոմատոլոգիական ֆակուլտետ

Կուրս	Ընդամենը	Սեռ	Երկիր	
I	17	4 իգ. 13 ար.	Իրան-6 Հորդանան-5 Հնդկաստան-2	Իրաք-2 Ռուսաստան-1 Մեծ Բրիտանիա-1
II	10	3 իգ. 7 ար.	Մեծ Բրիտանիա-6 Իրաք-1	Հորդանան-2 Եգիպտոս-1
III	10	2 իգ. 8 ար.	Իրաք-6 Իրան-2	Գերմանիա-1 Մեծ Բրիտանիա-1
IV	15	4 իգ. 12 ար.	Իրաք-11 Իրան-2 Հորդանան-2	
V	11	3 իգ. 8 ար.	Իրաք-7 Իրան-2 Հորդանան-2	
Ընդամենը	63	16 իգ. 47 ար.	Իրաք-27 Իրան-12 Հորդանան-11 Մեծ Բրիտանիա-8	Հնդկաստան-2 Ռուսաստան-1 Գերմանիա-1 Եգիպտոս-1

Բուժական ֆակուլտետ և Ստոմատոլոգիական ֆակուլտետ

N	Երկիր	Քանակ	Սեռ
1.	Հնդկաստան	231	166 իգ. 200 ար.
2.	Իրաք	59	
3.	Մեծ Բրիտանիա	27	
4.	Հորդանան	21	
5.	Իրան	18	
6.	Ֆիլիպիններ	2	
7.	Իռլանդիա	2	
8.	Շվեդիա	2	
9.	Շրի Լանկա	1	
10.	Գերմանիա	1	
11.	Ռուսաստան	1	
12.	Եգիպտոս	1	
Ընդամենը		**366**	

6. Ավանդական բժշկության համալսարանի մի քանի ուսանողներ «Քեմփըս Ինթերնեյշնլ» կազմակերպության հետ համատեղ պատրաստեցին 2 տեսահոլովակ, որտեղ ԱԲՀ օտարերկրյա ուսանողները ներկայացնում են իրենց կարծիքը հարազատ կրթօջախի և Հայաստանի մասին:

Կից ներկայացնում ենք տեսահոլովակների հղումները՝

1. https://www.facebook.com/UniversityofTraditonalMedicine/videos/2894467710838793/
2. https://www.youtube.com/watch?v=_2YTg4P1u5g

7. 29.07.2020 թվականին "Campus International" կազմակերպության ղեկավար Աշոկ Կարուվարաթոդի միջնորդությամբ ստացանք համագործակցության առաջարկ «Արևելյան Լոնդոնի քոլեջ»-ի Դուբայի մասնաճյուղից: Համագործակցության շրջանակներում «Արևելյան Լոնդոնի քոլեջ»-ը առաջարկեց յուրաքանչյուր ուսումնական տարում ապահովել առնվազն 30 ուսանողների փոխադրումը Ավանդական բժշկության համալսարան:

Նախքան պայմանագրի ստորագրումը և հաստատումը Ավանդական բժշկության համալսարանը՝ հանձինս ռեկտորի և արտաքին կապերի բաժնի, ունեցել են մի շարք քննարկումներ Արևելյան Լոնդոնի քոլեջի ներկայացուցիչներ հետ "Campus International" կազմակերպության ղեկավար Աշոկ Կարուվարաթոդի միջնորդությամբ: Բանակցությունների ընթացքում քննարկվել են ուսումնական պլանի և կրթության որակի հետ կապված մի շարք առանձնահատկություններ:

Մինչ պայմանագրի կնքումը խորհրդակցեցինք Ակադեմիական փոխճանաչման և շարժունության ազգային տեղեկատվական կենտրոնի տնօրեն Գայանե Հարությունյանի հետ, մասնավորապես որակավորումների եվրոպական շրջանակի համապատասխանության վերաբերյալ:

Համագործակցության շրջանակներում մեծ ուշադրություն է դարձվել ուսումնական պլանում նշված առարկաների, յուրաքանչյուր առարկային հատկացված ժամերի քանակի և կրեդիտների համապատասխանեցմանը: Քննարկումների արդյունքում համալսարանի կողմից հստակ նշվեց, որ ուսանողները կարող են փոխադրվել ԱԲՀ՝ համաձայն ՀՀ Կառավարության 25.08.2011 թվականի N1240-Ն որոշմամբ հաստատված «Բարձրագույն ուսումնական հաստատություններում սովորողների ակադեմիական շարժունության» կարգի: Ուսանողները պետք է համապատասխանեն ԱԲՀ-ի փոխադրման պահանջներին՝ ունենալով ոչ ավելի, քան 20 կրեդիտ ակադեմիական տարբերություն: Ուսանողները պետք է ունենան անգլերենի լավ իմացություն, ինչպես նաև դիմորդները պետք է ունենան լավ գիտելիքներ համաձայն ԱԲՀ- ի կողմից ներկայացված ուսումնական պլանում նշված առարկաներից, որը պայմանագրի անբաժան մասն է կազմելու: Որպես ընդհանուր դրույթ քննարկման ընթացքում նշվեց նաև, որ տեղափոխվող ուսանողները պետք է հետևեն և հարգեն ԱԲՀ-ի բոլոր կանոնակարգերը, ինչպես նաև պետք է ցուցաբերեն բարձր առաջադիմություն յուրաքանչյուր ուսումնական տարվա ընթացքում:

Արտաքին կապերի բաժնի վարիչը ներկայացրեց ընդունելության հետ կապված ընթացակարգը՝ ներկայացնելով պահանջվող փաստաթղթերի ցանկը, ինչպես նաև տրամադրեց տեղեկատվություն Հայաստանում կացության կարգավիճակ ձեռք բերելու վերաբերյալ:

«Արևելյան Լոնդոնի քոլեջ»-ի ներկայացուցիչների կողմից ստացանք բանավոր առաջարկություն ՊԴ փոխանակման վերաբերյալ: Նրանք առաջարկեցին առցանց կամ առկա պայմաններում Ավանդական բժշկության համալսարանի դասախոսներին ներգրավվել քոլեջում դասավանդելու կամ դասալսումներ կատարելու մեջ:

Հաշվի առնելով վերոնշյալ քննարկումներում նշված պայմանները՝ կողմերը որոշեցին 25.09.2020 թվականին կնքել եռակողմ պայմանագիր Ավանդական բժշկության համալսարանի, «Արևելյան Լոնդոնի քոլեջ»-ի և “Campus International”-ի միջև: Պայմանագիրը կնքվեց 6 տարի ժամկետով և կազմվեց 3՝ հայերեն և անգլերեն օրինակներից (Արձանագրություն № 1):

8. Ակադեմիական փոխճանաչման և շարժունության ազգային տեղեկատվական կենտրոնը (ENIC Armenia), շարունակելով ավանդույթը, դեկտեմբերի 23-ին Էլիտ Պլազա բիզնես կենտրոնում կազմակերպել էր օտարերկրյա որակավորումների ճանաչման վերաբերյալ հերթական դասընթացը, որին մասնակցեցին Ավանդական բժշկության համալսարանի պրոռեկտոր Արայիկ Գյոզալյանը և Արտաքին կապերի բաժնի վարիչ Անի Սարգսյանը:

Դասընթացը նախատեսված էր ՀՀ բուհերի ղեկավար կազմի, միջազգային բաժինների և ընդունելության հարցերով զբաղվող (admission officers) անձնակազմի համար: Դասընթացը անցկացվեց ինտերակտիվ եղանակով՝ տեսական և իրական օրինակների համակցությամբ:

Մասնակիցները դասընթացի ավարտին ստացան վկայական (մանրամասները *Արձանագրություն № 2*-ում):

9. 03.02.2021 թվականին “East London College”-ի ռեկտոր Ֆինաս Կունդիլը, ուսումնական մասի վարիչ Սուբեշ Նիկաթութարա Մադհավանը և մարքեթինգի մենեջեր Արուն-Կումար Կոտտեկատտուպարամբու Գանեսանը “Campus International” կազմակերպության ղեկավար Աշոկ Կարուվարաթոդի ուղեկցությամբ այցելեցին Ավանդական բժշկության համալսարան՝ ծանոթանալու համալսարանի պայմաններին, կրթական միջավայրին և առաքելությանը: Նրանց հյուրընկալեց ԱԲՀ-ի ռեկտոր պարոն Նորիկ Սարիբեկյանը, պրոռեկտոր Արայիկ Գյոզալյանը, Որակի ապահովման և կրթական ծրագրերի գծով պրոռեկտոր Արսեն Մինասյանը, ինչպես նաև Արտաքին կապերի բաժնի վարիչ Անի Սարգսյանը:

Հանդիպումն անցավ շատ ջերմ մթնոլորտում: Հանդիպման ընթացքում բնականաբար կրկին անդրադարձ եղավ պայմանագրի կետերին և հետագա գործունեությանը: Երկու կողմերն էլ վստահեցրին, որ պատշաճ կկատարեն պայմանագրում նշված կետերը:

Համալսարանի ղեկավարության հետ հանդիպումից հետո “East London College”-ի ներկայացուցիչների համար առանձին հանդիպում կազմակերպվեց համալսարանում սովորող օտարերկրյա ուսանողների հետ, որոնց հետ մոտ մեկ ժամ տևած զրույցն ընթացավ բաց, անկաշկանդ մթնոլորտում: Ուսանողները փաստեցին, որ ստանում են որակյալ կրթություն, և որ համալսարանում թե՛ տեսական, թե՛ գործնական պարապմունքները կազմակերպվում են բարձր մակարդակով, ինչպես նաև նշեցին, որ ցանկացած խնդիր, որն առաջանում է ուսման ընթացքում, ժամանակին ստանում է իր հանգուցալուծումը: Ներկայացուցիչների հետ զրույցում ուսանողները նշեցին, որ կլինիկական առարկաների դասախոսություններն ու գործնական պարապմունքներն անցկացվում են ոչ միայն համալսարանի ԳԲՈՒԿ-ում, այլև նաև Երևանի առաջնակարգ կլինիկաներում՝ համագործակցության հիմունքներով:

Հանդիպման վերջում ուսանողները նաև նշեցին, որ իրենց ապահով և պաշտպանված են զգում ոչ միայն համալսարանի պատերի ներսում, այլ նաև համալսարանից դուրս, և որ Հայաստանը հիանալի երկրներց մեկն է, որտեղ օտարերկրացիները կարող են ստանալ ոչ միայն որակյալ կրթություն, այլ նաև զգալ ապահով և անվտանգ:

Ամփոփելով այցը Ավանդական բժշկության համալսարան, “East London College”-ի ներկայացուցիչները շնորհակալություն հայտնեցին ջերմ ընդունելության և արդյունավետ հանդիպման համար (Արձանագրություն № 3):

10. 2021 թվականի մարտի 4-ին Ավանդական բժշկության համալսարանը՝ հանձինս ԱԲՀ-ի պրոռեկտոր Արայիկ Գյոզալյանի և Արտաքին կապերի բաժնի ղեկավար Անի Սարգսյանի, տեսակապով հանդիպում ունեցավ Լեհաստանի Բիդգոշչ քաղաքի “WSG” համալսարանի ռեկտորի և մյուս ներկայացուցիչների հետ:

Հանդիպմանը բացման խոսքով հանդես եկավ և մասնակիցներին ողջույնի խոսք հղեց “WSG” համալսարանի ռեկտոր Մարեկ Չամոտը/Marek Chamot/՝ ընդգծելով նաև Հայաստանի և Լեհաստանի միջև բարիդրացիական հարաբերությունները: Իր ելույթում պարոն Մարեկ Չամոտը իր գործընկեր Սոցիալ-տնտեսական գիտությունների քոլեջի դեկան Մագդալենա Բերգմանի/ Magdalena Bergmann հետ միասին հակիրճ խոսեց համալսարանի ստեղծման և գործունեության մասին: ԱԲՀ-ի պրոռեկտոր Արայիկ Գյոզալյանը նույնպես հակիրճ տեղեկություն տրամադրեց համալսարանի գործունեության վերաբերյալ:

Հանդիպման երկրորդ մասում մի շարք քննարկումներ ունեցանք համալսարաններում գործող կրթական ծրագրերի վերաբերյալ: Քննարկման ընթացքում պարզվեց, որ կրեդիտային համակարգը նույնն է: Ունենալով երկար տարիների փորձ կրթական ոլորտում համալսարանի երկու կողմերի ներկայացուցիչները որոշեցին համատեղ աշխատանքներ տանել նոր մասնագիտության ներդրման հետ կապված (մասնավորապես «Առողջապահության կառավարում»): Նախնական այն կիրականացվի որպես պիլոտային ծրագիր: Պրոռեկտոր Արայիկ Գյոզալյանը առաջարկեց տրամադրել ժամանակ մի քանի կարևոր կետեր քննարկելու Հայաստանի Հանրապետության կրթության, գիտության,

մշակույթի և սպորտի նախարարության հետ, այնուհետև կատարել վերջնական որոշում պիլոտային ծրագի հետ կապված ։

Հանդիպման վերջում քննարվեց թերևս ամենակարևոր և հիմնական հարցերից մեկը՝ ուսանողների և պրոֆեսորադասախոսական կազմի ակադեմիական շարժունությունը։ “WSG” համալսարանի Միջազգային գործերի պրոռեկտոր Մարզենա Սոբչակ-Միխալովսկան/Marzena Sobczak-Michałowska ընդգծեց, որ Covid-19 համավարակի հետ պայմանավորված կառաջանան որոշ խնդիրներ ակադեմիական շարժունությունը ապահովելու ընթացքում, այնուամենայնիվ հաշվի առնելով աշխարհում ստեղծված իրավիճակը, կփորձեն ստեղծել համապատասխան մեխանիզմներ ուսանողների և պրոֆեսորադասախոսական կազմի ակադեմիական շարժունությունը ապահովելու համար։ Հանդիպմանը ներկա էր նաև Հայաստանում Էրազմուս+ ծրագրի ազգային գրասենյակի ներկայացուցիչ Անի Մուրադյանը։ Մեր գործընկերը իր խոսքում նշեց, որ կարող են Էրազմուս+ ծրագրերի շրջանակներում աջակցել համալսարաններին ակադեմիական շարժունության հետ կապված ֆինանսական և այլ հարցերում և նշեց, որ պարբերաբար կտեղեկացնի համալսարաններին ընթացիկ ծրագրեր մասին։

Ամփոփելով բուռն քննարկումները՝ համալսարանի ներկայացուցիչները որոշեցին 2021 թվականի մարտի վերջին կազմակերպել ևս մեկ հանդիպում՝ շարունակելու իրենց հետագա քայլերը համագործակցության ուղղությամբ, ինչպես նաև ավելի մանրամասն քննարկելու պրոֆեսորադասախոսական կազմի ակադեմիական շարժունությանը վերաբերող հարցերը (Արձանագրություն № 4)։

11. 2021 թվականի ապրիլի 13-ին Ավանդական բժշկության համալսարանը՝ հանձինս ԱԲՀ-ի պրոռեկտոր Արայիկ Գյոզալյանի, Որակի ապահովման և կրթական ծրագրերի գծով պրոռեկտոր Արսեն Մինասյանի և Արտաքին կապերի բաժնի ղեկավար Անի Սարգսյանի, տեսակապով հանդիպում ունեցավ Դելիի բժշկական գիտությունների ակադեմիայի (DAMS) ներկայացուցիչ Սուրաչնա Չանդրայի հետ։ Հանիդպումը կազմակերպել էր “Campus International” կազմակերպության ղեկավար Աշոկ Կարուվարաթոդը։

Սուրաչնա Չանդրան հանդիպման սկզբում խոսեց FMGE նախապատրաստական դասընթացների դերի, կարևորության և առավելության մասին հնդիկ ուսանողների համար, ովքեր ուսումնասիրում են բժշկություն արտասահմանում։ Նա նշեց, որ FMGE քննությունն անցկացվում է Հնդկաստանի Հանրապետության բժշկական խորհրդի կողմից, որին մասնակցում են արտասահմանյան բուհերում ուսանած բոլոր հնդիկ ուսանողները, ինչն անհրաժեշտ է Հնդկաստանում բժշկական գործունեություն ծավալելու համար, այսինքն առանց անցնելու FMGE քննությունը, որը պարտադիր պայման է, հնդիկ ուսանողները, ըստ Հնդկաստանի կառավարության կողմից հաստատված կարգի, չեն կարող Հնդկաստանում աշխատեն որպես ընդհանու բժիշկ (մանրամասները *Արձանագրություն № 5*-ում)։

12. 2021 թվականի ապրիլի 21-ին Ավանդական բժշկության համալսարանը՝ հանձինս ԱԲՀ-ի պրոռեկտոր Արայիկ Գյոզալյանի և Արտաքին կապերի բաժնի ղեկավար Անի

Սարգսյանի, տեսակապով հանդիպում ունեցավ “Study Medicine Europe” կազմակերպության (SME) ներկայացուցիչներ Թամարա Այդինյանի և Ֆիլիպ Պանտելիսի հետ։

Հանդիպման սկզբում ներկայացուցիչները ողջունեցին միմյանց և հույս հայտնեցին, որ ընթացիկ քննարկումները, ինչպես նաև հետագա համագործակցությունը փոխշահավետ կլինի երկու կողմերի համար։

Արտաքին կապերի բաժնի վարիչ Անի Սարգսյանը նշեց, որ պայմանագրի ստորագրման օրվանից անցել է 3 տարի, այդ իսկ պատճառով կարիք կար քննարկելու և ամփոփելու 3 տարիների ընթացքում SME կողմց տարված աշխատանքները։

Պրոռեկտոր Արայիկ Գյոզալյանը նշեց, որ վերջին տարիներին գրանցվում է SME-ի կողմից ներգրաված ուսանողների թվի նվազում (2018-2019՝ 24 ուսանող, 2019-2020՝ 11 ուսանող, 2020-2021՝ 3 ուանող), որը բարենպաստ չէ Համալսարանի համար։

SME ներկայացուցիչ Ֆիլիպ Պանտելիսը նշեց, որ անցնող ուսումնական տարին ծանր շրջան է եղել բոլորի՝ այդ թվում նաև իրենց համար, և նման պայմաններում գործունեություն ծավալելը շատ բարդ է եղել կազմակերպության համար։ COVID-19 համավարակով պայմանավորված սահմանափակումների պատճառով դիմորդների ծնողները մեծ ֆինանսական վնասներ են կրել, որը բացասաբար է ազդել իրենց գործունեության վրա։ Համավարակի տարածումը կանխարգելու համար Մեծ Բրիտանիայի կառավարությունը, սահմանափակումներ մտցնելով և սոցիալական հեռավարությունը կարգավորելու նպատակով, արգելել էր կազմակերպել միջոցառումներ, որը կրկին բացասական ազդեցություն է ունեցել կազմակերպության գործունեության վրա։ Մասնավորապես, ամեն տարի SME կողմից կազմակերվել է բաց դռների օր, որը եղել է հավանկան ուսանողների աղբյուր իրենց համար։ Այդ ընթացքում կազմակերպության ներկայացուցիչները հավանական դիմորդների ընտանիքների հետ ունեցել են դեմ առ դեմ հանդիպումներ, որը խթանել է ուսանողների թվի աճին։ Սակայն, 2020 թվականին հարցումների քանակը կրճատվել է 50 %-ով և արդյունքում ունենք հետևյալ պատկերը։ Ցավոք սրտի, շահարկվեց նաև Հայաստանի և Ադրբեջանի միջև հակամարտությունը, որը նույնպես բացասաբար է ազդել ուսանողների թվի աճի վրա։

Պրոռեկտոր Արայիկ Գյոզալյանը հետաքրքրվեց, թե արդյոք կազմակերպությունը ձեռնարկում է բարենպաստ միջոցառումներ՝ 2020 թվականին առաջացած խոչընդոտերը մասնակիորեն վերացնելու նպատակով։ Ֆիլիպ Պանտելիսը հավաստիացրեց, որ տարվում են աշխատանքներ, և 2021-2022 ուսումնական տարում կունենանք առնվազն 10 դիմորդ։

Հանդիպման վերջում կողմերը որոշեցին հետագայում, մասնավորապես՝ պայմանագրի ժամկետը լրանալուց ոչ ուշ, քան 6 ամիս առաջ, կազմակերպել հանդիպում՝ հետագա համագործակցությունը շարունակելու կամ չեղյալ համարելու նպատակով։ (Արձանագրություն № 6)։

13. 2021 թվականի մայիսի 21-ին Ավանդական բժշկության համալսարանը գրավոր տարբերակով համագործակցության առաջարկ ստացավ “Success Point” քոլեջի կողմից։

Հիմնական առաջարկությունը վերաբերում էր համատեղ կրթական ծրագրերի իրականացմանը: Ըստ իրենց կողմից արված առաջարկության՝ ուսանողները առաջին կուրսը սովորելու են "Success Point" քոլեջում՝ առաջնորդվելով Ավանդական բժշկության համալսարանում գործող կրթական ծրագրով: Ստուգարքներն ու քննությունները բարեհաջող հանձնած ուսանողներին կտրվի ԱԲՀ-ի ակադեմիական տեղեկագիր և ուսանողներին հնարավորություն կընձեռվի առանց խոչընդոտի 2-րդ կուրսից ուսումը շարունակելու Ավանդական բժշկության համալսարանում:

2021 թվականի մայիսի 25-ին Ավանդական բժշկության համալսարանը՝ հանձինս ԱԲՀ-ի պրոռեկտոր Արայիկ Գյոզալյանի, Որակի ապահովման և կրթական ծրագրերի գծով պրոռեկտոր Արսեն Մինասյանի և Արտաքին կապերի բաժնի ղեկավար Անի Սարգսյանի, տեսակապով հանդիպում ունեցավ "Success Point" քոլեջի ներկայացուցիչների հետ:

Ամփոփելով քննարկումները՝ ԱԲՀ-ի և "Success Point" քոլեջի ներկայացուցիչները որոշեցին կազմել երկկողմանի պայմանագիր, որը կխթանի ուսանողների ակադեմիական շարժունությունը և հնարավորություն կընձեռի "Success Point" քոլեջի ուսանողներին շարունակել ուսումը Ավանդական բժշկության համալսարանում (մանրամասները *Արձանագրություն № 7*-ում):

Հետագայում, մի շարք հեռավար հանդիպումներ ունենալուց հետո, կողմերը ամփոփեցին քննարկուների ընթացքում առաջացած հարցերն ու պատասխանները և 2021 թվականի հունիսի 16-ին կնքեցին եռակողմ պայմանագիր՝ «Ավանդական բժշկության համալսարան»-ի, ի դեմս ռեկտոր՝ կենսաբանական գիտությունների թեկնածու, պրոֆեսոր Նորիկ Սարիբեկյանի, «Սըքսես Փոինթ» քոլեջի, ի դեմս գործադիր տնօրեն՝ Ֆինաս Կունդիլի և երրորդ կողմ՝ «Կամպուս Ինթերնեյշնլ» ՍՊԸ-ի, ի դեմս Աշոկ Կարուվարաթոդիի միջև (մանրամասները *Արձանագրություն № 8*-ում):

14. Ամփոփելով Լեհաստանի Բիդգոշչ քաղաքի "WSG" համալսարանի ռեկտորի և մյուս ներկայացուցիչների հետ քննարկումների ընթացքում առաջացած հարցերն ու պատասխանները՝ *2021 թվականի հուլիսի 16-ին* կնքվեց *փոխըմբռնման հուշագիր* Ավանդական բժշկության և WSG համալսարանների միջև՝ հաստատելով հետազոտական, կրթական և մշակութային կապեր համալսարանների գիտական անձնակազմի և ուսանողների միջև (մանրամասները *Արձանագրություն № 9*-ում):

15. 2021 թվականի հուլիսի 17-ին «Անի Գրանդ» հյուրանոցի կոնֆերանս դահլիճում տեղի ունեցավ Ավանդական բժշկության համալսարանի 2020-2021 ուս. տարվա «Բուժական» և «Ստոմատոլոգիական» ֆակուլտետների շրջանավարտների ավարտական վկայականների հանձնման հանդիսավոր արարողությունը, որին ներկա էին ԱԲՀ-ի վարչական և դասախոսական կազմը, ԱԲՀ-ի ուսանողները և շրջանավարտների ծնողներից մի քանիսը:

Միջոցառմանը հեռավար կարգով միացել էին նաև ԱԲՀ-ի որակի ապահովման և կրթական ծրագրերի գծով պրոռեկտոր Արսեն Մինասյանը, Մոսկվայի պետական մանկավարժական համալսարանի բ.գ.թ., պրոֆեսոր Ֆիլկեվիչ Իգոր Ալեքսանդրովիչը և

Դելիի բժշկական գիտությունների ակադեմիայի (DAMS) ներկայացուցիչ Սուրաչնա Չանդրան, ովքեր իրենց ողջույնի խոսքն ու բարեմաղթանքները հղեցին մեր շրջանավարտներին՝ մաղթելով նորանոր հաջողություններ և անսպառ եռանդ:

Շրջանավարտներին իր բարեմաղթանքները հղեց ԱԲՀ-ի դեկան Անահիտ Կարապետյանը՝ մեջբերելով, որ ԱԲՀ-ն շուրջ 30 տարվա իր գործունեության ընթացքում տվել է հրաշալի և բարձր որակավորմամբ մասնագետներ, ովքեր ծառայում ու ծառայելու են բժշկի վեհ առաքելությանը, և հիմա հերթը շրջանավարտներինն է, որ հարազատ կրթօջախում ստացած գիտելիքներն ու փորձը ծառայեցնեն հանրության առողջության վերագտման ու պահպանման անգնահատելի գործին՝ արդարացնելով համալսարանի հույսերը:

Ինչպես նաև վերջում դեկանը շրջանավարտներին մաղթեց բարի երթ ու կանաչ ճանապարհ՝ իրենց կարևոր ու անգնահատելի գործում:

Միջոցառմանը ելույթ ունեցան նաև ԱԲՀ-ի պրոռեկտոր Արայիկ Գյոզալյանը և Արտաքին կապերի բաժնի ղեկավար Անի Սարգսյանը՝ ցանկանալով շրջանավարտներին հաստատակամություն, անկոտրում կամք, որպեսզի համալսարանում ստացած գիտելիքների, ձեռքբերած հմտությունների և կարողությունների շնորհիվ կարողանան կերտել իրենց ուրույն ուղին և հաստատուն քայլերով գնան դեպի իրենց հաջողությունը:

Արտաքին կապերի բաժնի ղեկավար Անի Սարգսյանը նաև իր երախտագիտությունը հայտնեց շրջանավարտներին իրենց ջանքերի, քրտնաջան աշխատանքի և պատասխանատվության համար:

Իր խոսքում Անի Սարգսյանը նշեց նաև, որ յուրաքանչյուր պատմություն ունի ավարտ, բայց կյանքում յուրաքանչյուր ավարտ մի նոր բանի սկիզբ է և ցանկացավ, որ այդ սկիզբը լի լինի հույսով, բարգավաճմամբ, ինչպես նաև նոր ձեռքբերումներով և հաջողություններով:

Վերջում շրջանավարտներին հանձնվեց ավարտական վկայականները և կտրվեց ավարտական միջոցառման համար նախատեսված տորթը:

Ամբողջ միջոցառումը ուղիղ եթերով հեռարձակվեց Ավանդական բժշկության համալսարանի ֆեյսբուքյան պաշտոնական էջում (https://www.facebook.com/UniversityofTraditonalMedicine/videos/4498695420196548/):